ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է երկու փուլով մրցույթի գնահատող հանձնաժողովի 2026 թվականի մարտի 12-ի N 2 որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ ԵՔ-ԵՄԾՁԲ-26/1

I. ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1. Պատվիրատուն՝ Երևանի քաղաքապետարանը, որը գտնվում է ՀՀ ք. Երևան, Արգիշտի 1 հասցեում, Վարդավառին նվիրված միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվող երկու փուլով մրցույթի հնարավոր մասնակիցների որոշման նպատակով հայտարարում է նախաորակավորման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Նախաորակավորման ընթացակարգ):

II. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի նախաորակավորման ընթացակարգին մասնակցելու հավասար իրավունք:

3. Նախաորակավորման ընթացակարգին մասնակցելու ցանկություն ունեցող մասնակիցը պետք է բավարարի «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով սահմանված «Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» որակավորման չափանիշին:

3.1 Նախաորակավորման ընթացակարգին մասնակցելու արդյունքում նախաորակավորված կհամարվեն այն մասնակիցները, որոնք հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել են առնվազն երկու պայմանագրով ստանձնած պայմանագրային պարտավորություններ, ընդ որում.

Նշված պայմանագրերի առարկան և ըստ այդմ մասնակցի ստանձնած պայմանագրային պարտավորությունները նույնպես պետք է վերաբերեն մշակութային միջոցառման կազմակերպմանը (օրինակ, սակայն չսահմանափակվելով՝ համերգի կազմակերպում, միջազգային միջոցառումների կազմակերպում և այլ): Ի հավաստումն վերոնշյալ պայմանների բավարարման, մասնակցի կողմից պետք է ներկայացվեն համապատասխան պայմանագրի (այդ թվում դրա մաս կազմող հավելվածների, համաձայնագրերի) պատճենները, ինչպես նաև այն փաստաթղթերի պատճենները, որոնցով հավաստվում է մասնակցի կողմից վերոնշյալ պայմանագրերով ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարումը:

3.2 Նշված պայմանագրերից յուրաքանչյուրի արժեքը պետք է կազմի առնվազն 80.000.000 (ութսուն միլիոն) ՀՀ դրամ:

Մասնակիցը համարվում է սույն ենթակետով նախատեսված որակավորման չափանիշին բավարարող, եթե հայտով ներկայացրել է պահանջվող տեղեկությունները.

4. Մասնակիցները նախաորակավորման ընթացակարգին կարող են մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Նման դեպքում՝

1) նախաորակավորման հայտը ներառում է նաև համատեղ գործունեության պայմանագիր.

2) նախաորակավորման հայտի գնահատման ժամանակ հաշվի են առնվում համատեղ գործունեության պայմանագրի բոլոր անդամների միասնական որակավորումները (համատեղ գործունեության պայմանագրի յուրաքանչյուր անդամի որակավորումը պետք է համապատասխանի

այդ պայմանագրով տվյալ անդամի ստանձնած՝ սույն հրավերով սահմանված որակավորման պահանջներին)

3) մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն.

4) համատեղ գործունեության պայմանագրի կողմը (կողմերը) չի (չեն) կարող նույն ընթացակարգին ներկայացնել առանձին հայտ (հայտեր):

5) կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

5. Երկու փուլով մրցույթի անցկացման ժամանակ մասնակիցներին կարող է հայտնի դառնալ կամ վստահվել պետական գաղտնիք պարունակող տեղեկություն, որի հրապարակումը (ցանկացած ձևով) այլ անձի (այդ թվում՝ հարազատներին) կարող է առաջացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված պատասխանատվություն:

III. ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ԵՎ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

6. Մասնակիցն իրավունք ունի նախաորակավորման հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ գրավոր պահանջելու նախաորակավորման հայտարարության վերաբերյալ պարզաբանում: Հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրում է գրավոր՝ հարցումը ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում: Որևէ մասնակցի տեղեկություն տրամադրելու դեպքում պատվիրատուն պետք է ապահովի այդ տեղեկության մատչելիությունը բոլոր հնարավոր մասնակիցների համար:

Սույն կետում նշված հարցումը էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացվելու դեպքում մասնակիցը գրության բնօրինակից արտատպված տարբերակը ուղարկում է հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

Հարցումը էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացված լինելու դեպքում դրա պարզաբանման վերաբերյալ գրության բնօրինակից արտատպված տարբերակը ուղարկվում է հանձնաժողովի քարտուղարի՝ սույն հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստից մասնակցի՝ հարցումը ստացված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով:

7. Հարցման և պարզաբանումների բովանդակության մասին հայտարարությունը հրապարակվում է տեղեկագրում՝ հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրելու օրը, առանց նշելու հարցումը կատարած մասնակցի տվյալները, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում հարցման և պարզաբանումների բովանդակության մասին պարզաբանումը տրամադրվում է հրավեր ստացած մասնակիցներին:

8. Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն բաժնով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է սույն հայտարարության բովանդակության շրջանակից: Ընդ որում, մասնակիցը գրավոր ծանուցվում է պարզաբանում չտրամադրելու հիմքերի մասին՝ հարցումը ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

9. Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն երկու օրացուցային օր առաջ սույն հայտարարության մեջ կարող են կատարվել փոփոխություններ: Փոփոխություն կատարելու օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը փոփոխություն կատարելու մասին հայտարարությունը հրապարակում է տեղեկագրում:

10. Նախաորակավորման հայտարարության մեջ փոփոխություններ կատարվելու դեպքում նախաորակավորման հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը հաշվվում է այդ փոփոխությունների մասին տեղեկագրում հայտարարության հրապարակման օրվանից:

IV. ՆԱԽԱՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

11. Սույն ընթացակարգին մասնակցելու համար մասնակիցը հանձնաժողովին ներկայացնում է հայտ:

12. Նախաորակավորման հայտը մասնակիցը հանձնաժողովին կարող է ներկայացնել՝

1) էլեկտրոնային եղանակով՝ հանձնաժողովի քարտուղարի սույն հայտարարությամբ նախատեսված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով.

2) փաստաթղթային ձևով՝ փակ ծրարով, սոսնձված: Ծրարի վրա նախաորակավորման հայտը կազմելու լեզվով նշվում են՝

ա. պատվիրատուի անվանումը և հայտի ներկայացման վայրը (հասցեն).

բ. ընթացակարգի ծածկագիրը.

գ. «չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը.

դ. մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը:

13. Ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել հանձնաժողովին ոչ ուշ, քան սույն հայտարարությունը տեղեկագրում հրապարակվելու օրվանից հաշված ***2026 թվականի մարտի 31-ը ժամը 12:00-ն:***

Փաստաթղթային ձևով ներկայացվող նախաորակավորման հայտերը հանձնաժողովին անհրաժեշտ է ներկայացնել մինչև սույն կետով սահմանված ժամկետը լրանալը **2026 թվականի մարտի 31-ը ժամը 12:00-ն՝ Երևանի քաղաքապետարան Արգիշտիի 1 հասցեի 128 աշխատասենյակ և/կամ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլ. հասցեին irina.eghiazaryan@yerevan.am:**

14. Փաստաթղթային ձևով ներկայացված նախաորակավորման հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղարը:

Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ դրանց ստացման հերթականության՝ գրանցամատյանում նշելով գրանցման համարը, օրը և ժամը: Մասնակցի պահանջով դրա մասին տրվում է տեղեկանք: Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը գրանցամատյանում չեն գրանցվում և դրանք՝ ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարի կողմից վերադարձվում են:

15. Մասնակիցը նախաորակավորման հայտով ներկայացնում է՝

1) իր կողմից հաստատված նախաորակավորման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ համաձայն հավելված N 1-ի,

2) իր կողմից հաստատված հայտարարություն՝ սույն հայտարարությամբ սահմանված որակավորման չափանիշի պահանջներին իր համապատասխանության մասին՝ համաձայն հավելված 2-ի,

3) համատեղ գործունեության պայմանագրի պատճենը, եթե մասնակիցները սույն ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով):

16. Եթե նախաորակավորման հայտը մասնակիցը ներկայացնում է՝

1) փաստաթղթային եղանակով, ապա հայտում ներառվող բոլոր փաստաթղթերը, բացառությամբ սույն հայտարարության 15-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթի, ներկայացվում են բնօրինակից և **2 թվով պատճեններից**: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «պատճեն» բառերը: Բնօրինակ փաստաթղթերի փոխարեն կարող են ներկայացվել դրանց նոտարական կարգով վավերացված օրինակները.

2) էլեկտրոնային եղանակով, ներկայացվում են բնօրինակի փաստաթղթերից արտատպված (սկանավորված) տարբերակները:

17. Նախաորակավորման հայտերը, հայերենից բացի, կարող են ներկայացվել նաև անգլերեն կամ ռուսերեն:

18. Ծրարը և սույն հայտարարությամբ նախատեսված՝ մասնակցի կողմից կազմվող փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե նախաորակավորման հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ: Նպատակահարմարության դեպքում մասնակիցը պահանջվող տեղեկությունները կարող է ներկայացնել սույն հայտարարությամբ առաջարկվող ձևերից տարբերվող այլ ձևերով՝ պահպանելով պահանջվող վավերապայմանները:

V. ՆԱԽԱՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՈՒՄԸ, ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ

19. Նախաորակավորման հայտերի բացումը, գնահատումը և արդյունքների ամփոփումը կատարվում է նախաորակավորման հայտերի բացման նիստում՝ սույն հայտարարությունը տեղեկագրում հրապարակվելու օրվանից հաշված **2026 թվականի մարտի 31-ին ժամը 12:00-ն**:

Ընդ որում հայտերի գնահատումն իրականացվում է հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված մինչև երեք աշխատանքային օրվա ընթացքում:

20. Նախաորակավորման հայտերի բացման և գնահատման նիստում՝

1) հանձնաժողովի քարտուղարը տեղեկատվություն է հաղորդում գրանցամատյանում կատարված գրառումների մասին և հանձնաժողովի նախագահին է փոխանցում հայտերի գրանցամատյանը, դրա անբաժանելի մասը հանդիսացող մյուս փաստաթղթերը, գրանցված և (կամ) էլեկտրոնային եղանակով ներկայացված հայտերը.

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված փաստաթղթերը նախագահին (նիստը նախագահողին) փոխանցվելուց հետո հանձնաժողովը գնահատում է՝

ա. հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և բացում համապատասխանող գնահատված հայտերը.

բ. բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց, ինչպես նաև էլեկտրոնային եղանակով ներկայացված փաստաթղթերի կազմման համապատասխանությունը սույն հայտարարությամբ սահմանված վավերապայմաններին.

21. Բավարար են գնահատվում սույն հայտարարությամբ նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը: Հակառակ դեպքում նախաորակավորման հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում:

Եթե նախաորակավորման հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ սույն հայտարարության պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում սույն կետում նշված՝

1) առաջարկության մեջ պարտադիր և մանրամասն նկարագրվում են արձանագրված անհամապատասխանությունները.

2) առաջարկությունն ուղարկվում է մասնակցի՝ սույն հայտարարության մեջ նշված քարտուղարի էլեկտրոնային փոստից մասնակցի դիմումում նշված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով:

22. Եթե սույն հայտարարության 21-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է: Մասնակիցը շտկված փաստաթղթերը ներկայացնում է սույն ընթացակարգին մասնակցելու դիմումում նշված էլեկտրոնային փոստից հանձնաժողովի քարտուղարի՝ սույն հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով:

23. Հանձնաժողովի անդամը կամ քարտուղարը չի կարող մասնակցել հանձնաժողովի աշխատանքներին, եթե հանձնաժողովի գործունեության ընթացքում պարզվում է, որ վերջիններիս կողմից հիմնադրված կամ բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունը, կամ իրենց մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձը (ծնող, ամուսին, երեխա, եղբայր, քույր,տատ, պապ, թոռ, ինչպես նաև ամուսնու ծնող, երեխա, եղբայր, քույր, տատ, պապ, թոռ) կամ այդ անձի կողմից հիմնադրված կամ բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունը սույն ընթացակարգին մասնակցելու համար ներկայացրել է հայտ: Եթե առկա է սույն կետով նախատեսված պայմանը, ապա սույն ընթացակարգի առնչությամբ շահերի բախում ունեցող հանձնաժողովի անդամը կամ քարտուղարը անհապաղ ինքնաբացարկ է հայտնում սույն ընթացակարգից:

24. Հայտերը բացման, գնահատման և արդյունքների ամփոփման մասին կազմվում է արձանագրություն, որով հաստատվում է նաև նախաորակավորված մասնակիցների ցուցակը: Հանձնաժողովի քարտուղարը հայտերի նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝

1) իր և հանձնաժողովի՝ հայտերի բացման նիստին ներկա անդամների կողմից ստորագրված շահերի բախման բացակայության մասին հայտարարությունների բնօրինակներից արտատպված (սկանավորված) տարբերակները հրապարակում է տեղեկագրում.

2) սույն հայտարարությամբ նախատեսված պայմաններին անբավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներին ծանուցում է նախաորակավորման հայտերի մերժման հիմքերի մասին:

25. Երկու փուլով մրցույթի գործընթացին մասնակցելու իրավունք ստանում են նախաորակավորված մասնակիցների ցուցակում ընդգրկված այն մասնակիցները, որոնք հաստատում և սույն հայտարարությամբ սահմանված ժամկետում հանձնաժողովի քարտուղարին ներկայացնում են պետական գաղտնիք պարունակող տեղեկատվության պահպանման մասին պարտավորագրի բնօրինակը: Այս կապակցությամբ հանձնաժողովի քարտուղարը սույն հայտարարության մեջ նշված իր էլեկտրոնային փոստից հայտերի բացման նիստին ավարտին հաջորդող մինչև երկրորդ աշխատանքային օրվա ավարտը նախաորակավորված մասնակիցների՝ դիմումում նշված էլեկտրոնային փոստերին միաժամանակ ուղարկում է ծանուցում՝ նշելով հրավերի ստացման կարգը: Ընդ որում սույն կետում նշված ծանուցմանը կցվում է նաև պետական գաղտնիք պարունակող տեղեկատվության պահպանման մասին պարտավորագրի ձևը և լրացման պայմանները:

Նախաորակավորված մասնակիցները հաստատում և սույն կետում նշված ծանուցումը ուղարկվելուն հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում, առձեռն հանձնաժողովի քարտուղարին են ներկայացնում պետական գաղտնիք պարունակող տեղեկատվության պահպանման մասին պարտավորագրի բնօրինակը: Հանձնաժողովի քարտուղարը տեղում գնահատում է կազմված փաստաթղթի համապատասխանությունը սահմանված ձևին, ինչպես նաև հրավերի ստացման համար համապատասխան լիազորություն ունեցող անձի ինքնությունը և համախատասխանության դեպքում նույն պահին տրամադրում է հրավերը և համապատասխան տեղեկանք՝ նշելով հրավերի տրամադրման ամսաթիվը, ժամը:

26. Սույն հայտարարության 25-րդ կետով նախատեսված ժամկետից ուշ փաստաթղթեր ներկայացրած նախաորակավորված մասնակիցներին հրավեր չի տրամադրվում, իսկ երկու փուլով մրցույթի հայտերի ներկայացման վերջնաժամկետը հաշվարկվում է նույն կետով սահմանված ժամկետը ավարտվելուն հաջորդող օրվանից:

27. Սույն ընթացակարգի վերաբերյալ բողոքարկումն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքով և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

Ընդ որում յուրաքանչյուր՝

1) շահագրգիռ անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով.

2) ոք իրավունք ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը բողոքարկել սույն հայտարարության պահանջները:

Բողոքարկման համար գանձվող պետական տուրքերի դրույքաչափերը սահմանված են «Պետական տուրքի մասին» օրենքով:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել հանձնաժողովի քարտուղար ՝ Իրինա Եղիազարյանին:

Հեռախոս 011514374

Էլ. փոստ irina.eghiazaryan@yerevan.am

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան

Հավելված N 1
*ԵՔ-ԵՄԾՁԲ-26/1** ծածկագրով երկու փուլով
մրցույթի նախաորակավորման
ընթացակարգի հայտարարության

ԴԻՄՈՒՄ*

նախաորակավորման ընթացակարգին մասնակցելու

_____ հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցել
մասնակցի անվանումը

_____-ի կողմից _____ԵՔ-ԵՄԾՁԲ-26/1 ծածկագրով երկու
պատվիրատուի անվանումը

փուլով մրցույթի նախաորակավորման ընթացակարգին և նախաորակավորման հայտարարության պահանջներին պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

_____-ի հարկ վճարողի հաշվառման համարն է՝ _____
_____:
մասնակցի անվանումը հարկի վճարողի հաշվառման համարը

_____ -ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ _____
_____:
մասնակցի անվանումը էլեկտրոնային փոստի հասցեն

_____ _____
մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրություն

Կ. Տ.

**լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հայտարարությունը տեղեկագրում հրապարակելը:*

Հավելված N 2
ԵՔ-ԵՄԾՁԲ-26/1 ծածկագրով երկու փուլով մրցույթի
նախաորակավորման
ընթացակարգի հայտարարության

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» որակավորման չափանիշին համապաստախանության մասին

_____ հայտարարում և հավաստում է, որ հայտը ներկայացնելու
մասնակցի անվանումը

տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում իրականացրել է ներքոհիշյալ ծառայությունների մատուցումը՝

Նախաորակավորման հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրած պայմանագրերի		
հ/հ	առարկան	պատվիրատուի և նրա հետ կապ հաստատելու տվյալները
տարեթիվը՝..... թվական		
1		
2		
...		
տարեթիվը՝..... թվական		
1		
2		
...		
տարեթիվը՝..... թվական		
1		
2		
...		

_____ _____
մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրություն

Կ. Տ.

Ծառայության							
Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	Հ/Մ	ընդհանուր գինը	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը
1	79951110/68	1. Գնման առարկայի ընդհանուր նկարագիր Գնման առարկան հանդիսանում է Վարդավառի տոնին նվիրված համաքաղաքային բացօթյա միջոցառման կազմակերպումը՝ նախատեսված քաղաքի բնակիչների և հյուրերի լայն մասնակցությամբ մշակութային-ժամանցային ծրագրի իրականացման համար: Միջոցառումը պետք է ապահովի հայկական ավանդական տոնի ժամանակակից, կազմակերպված և անվտանգ իրականացում՝ համադրելով մշակութային, երաժշտական և ջրային տոնական տարրերը: 2. Միջոցառման անցկացման վայրը և ժամանակը Միջոցառումն անցկացվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ՝ 2026 թվականի հուլիս ամսին՝ եկեղեցական օրացույցով սահմանված տոնական օրը, ժամը 12:00-ից մինչև 20:00-ը: 3. Միջոցառման հիմնական բովանդակությունը Միջոցառման ծրագրում պետք է ներառվեն՝ • հանդիսավոր բացման արարողություն, • համերգային և ժամանցային ծրագիր, • էլեկտրոնային և ժամանակակից երաժշտության կատարումներ, • ջրային տոնական ակտիվություններ, • մանկական և ընտանեկան ժամանցային ծրագրեր, • տոնական փակման հատված, • ջրային խաղեր,	դրամ	200000000	1	Երևան	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչև հուլիս ամիսը ներառյալ

		• վազքի մարաթոն Հանրապետության հրապարակի շրջակայքում: 4. Տեխնիկական և կազմակերպչական ապահովում Կատարողը պարտավոր է ապահովել՝ • բեմահարթակի տեղադրում և տեխնիկական հագեցում, • ձայնային և լուսային համակարգերի տեղադրում, • միջոցառման մոնտաժման և ապամոնտաժման աշխատանքներ, • տեխնիկական սպասարկում միջոցառման ամբողջ ընթացքում, • տարածքի ձևավորում և կազմակերպում: 5. Մասնակիցների ներգրավում Ծրագրում պետք է ներգրավվեն էլեկտրոնային երաժշտության ժանրում հանդես եկող միջազգային և հայկական կատարողներ: Համերգային ծրագիրը նախապես ներկայացվում է Պատվիրատուի համաձայնեցմանը: 6. Մանկական ժամանցային գոտու կազմակերպում Միջոցառման շրջանակում կատարողը պարտավոր է ապահովել առանձին մանկական ժամանցային գոտի, որը պետք է ներառի՝ • երեխաների համար նախատեսված խաղային տարածք, • ջրային և շարժական խաղեր, • մրցույթներ և ինտերակտիվ ծրագրեր, • անիմատորների և խաղավարների մասնակցություն, • երեխաների անվտանգության ապահովում և մշտական վերահսկողություն: 7. Սպասարկման ենթակառուցվածքներ Միջոցառման ընթացքում պետք է ապահովվեն՝ • սննդի և ըմպելիքների սպասարկման կետեր, • շարժական սանհանգույցներ, • ջրամատակարարում և էլեկտրամատակարարում,					

		• աղբահանություն և տարածքի մաքրություն, • տեղեկատվական և ուղղորդող նշաններ: 8. Անվտանգության ապահովում Պետք է ապահովվեն՝ • մուտքերի վերահսկողություն, • բժշկական օգնության կետ, • հրշեջ և արտակարգ իրավիճակների անվտանգության միջոցառումներ, • այցելուների անվտանգ տեղաշարժի և տարհանման հնարավորություններ: 9. Տարածքի վերականգնում Միջոցառման ավարտից հետո կատարողը պարտավոր է ապահովել տարածքի ամբողջական մաքրում և դրա նախնական վիճակի վերականգնում:					